

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԿԱՐԻԱ

Տարեկա 912 . . 30.
Վեցամսեայ 6 . . .

ԱՐՏԱՍՈՂԱՆՈՒՄ

Երկու քիւ մէկ ծրարով
Տարեկան . . . 14 30.


Վեցամսեայ . . . 7 . .

ԱՍԵՐԻԿԱ

Տարեկան 2. 60 Տոյար
Վեցամսեայ 1. 50 . .

ԿԱՆԻՍԻԿ


Ծանոցման տողը
20 սանրիմ



ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԵԿՈՒԹԻ ԱՄԵՆ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ



ՇԱՍՅԷ

Rédaction du journal

„Ira. vounk“

VARNA (Bulgarie)

Редакция

НА ВѢСТНИКЪ

Иравунк“

ВАРНА

Գրութիւնք եւ չեմ
տրոշիր

ԶԵԿՈՅԾ

Ջատկական տունը: պատճառաւ յառաջիկայ չորեքշաբթի օր ԻՐԱՆԻՔ ԼԿԻՈՒԹԻ ԿՐԻՍՏԱՐԱՐԱԿՈՒՄ:

ԿՕՆԳՐԵՍԸ

Դեռ շատ չէ, երբ սոյն այս էջերում, փորձելով փնտռել գրողներու թէ ինչ գործնական միջոցով կարելի էր իրականացնել յեղափոխական կուսակցութիւններին միջև կարելի էր ընդհանուր Միութեան ամենահամակրելի և միանգամայն անհրաժեշտ միտքը, մենք այն եղբայրացիների յանգեցանք, իրենց գրութեան վերջում լուծումից յետոյ, թէ նպատակաւորաբար էր կարելի եղածին չափ շուտով գումարել մի կոնգրէս, մասնակցութեամբ բոլոր յեղ. կուսակցութիւններին:

Նրանց յետոյ, այլևայլ տեղերից, մեզ տեղեկութիւններ հասան հաստատող որ այդ միտքը մեծ ընդունելութիւն և համակրութիւն գտած էր ինչպէս կուսակցական, նոյնպէս և ոչ-կուսակցական անխոր. բազմաթիւ անհատների և խմբերի կողմից: Ուրիշ տեսակ էլ չէր կարելի սպասել:

Բաց ի սրանից, մենք միևնոյն նիւթին նուիրած մի ուրիշ յոգևածի մէջ, քննելով այն խնդիրը թէ որի կողմից կարող էր գալ այդ գեղեցիկ գործի նախաձեռնութիւնը, մասնաւորապէս կանգնել էինք Միութեանականների վերայ, իբրև մի Յեղ. Մարմին, որի ծրագրի, ինչպէս յայտնի է, առաջին և անմիջական մասը կազմում է հէնց այդ. կուսակցութիւնների միացման հարցը: Մենք գրեթէ ապահով էինք որ Միութեանականները կվճռէին այդ անհրաժեշտ քայլն առնել, յաղթահարելով այդ նկատմամբ անցեալում տեղի ունեցած յաւաքի յուսախաբութիւններից առաջացած շատ հասկանալի տարակուսանքներին:

Կարելի է հասկանալ, հետեաբար, թէ որքան մեծ կարող է եղած լինել մեր ուրախութիւնը, ինչպէս նաև, տարակոյս չունինք, ուրախութիւնը բոլոր նրանց, որոնք իրենց իմաստութեան հետ միացած ունին սրտերի մէջ զգացում, երբ կարգացինք միջանի օր առաջ նրանց կողմից հրատարակուած ծանօթ Յայտարարութիւնը, որով յայտնելուց յետոյ թէ իրենց Բ. Պատգմ. Ժողովը լուրջ քննութեան ենթարկելով Միութեան հարցը և կանգնելով կոնգրէսի անհրաժեշտութեան վերայ, որպէս այդ հարցի լուծման ամենանպատեալ արժար և յաջող ձևի վերայ, ծանուցանում էր միևնոյն ժամանակ որ ի մօտայ այդ նպատակով հրաւիրագրեր էին ուղարկուելու իրենց կողմից բոլոր Յեղ. կուսակցութիւններին: Այս չէ բոլորը:

Այժմ մեր անձնապէս քաջածամենահաստի տեղեկութիւններին նայելով, այդ հրաւիրագրերը արդէն պատրաստուած և անմիջապէս, առանց յապաղման, ուղարկուելու են հայ յեղափոխական երեք ծանօթ կուսակցութիւններին, որոնք են, Հ. Յ. Գաշնակցութիւնը, Հին Հնչակեան կուսակցութիւնը և Նոր Հնչ. կուսակցութիւնը:

Ահա՛ իրողութիւնները, իրենց թանձրացած, չոչափելի ձևին մէջ:

Թէ ինչ պայմանների ու կերպերի մէջ որոշած են Միութեանականները դնել գումարուելիք առաջին հայ յեղափոխական կոնգրէսը, այդ մասին մեզ անկ չէ հետախուզութեան մոտենալ, ոչ էլ այդ մի առաջնակարգ խնդիր է: Անշուշտ, այդ մասին բանակցութիւններ կատարելով, հրաւիրող և հրաւիրուած մարմինները կարող կլինին գալ համաձայնութեան, վերաբերմամբ կոնգրէսի գումարման վայրին, ժամանակին և այլևայլ նպատակաւորմար հանգամանքներին:

Ինչ անմիջապէս ընկնում է մեր բաժնին, այդ նախ և ամենից առաջ արձանագրելն է այդ իր տեսակի մէջ առաջնակարգ կարեւորութիւն ունեցող ձև վերին

ծայր ուրախալի փաստը, որ կատարուած է հայ յեղափոխութեան տարեգրութեան մէջ, և ապա մի անգամ ևս շնորհաւորել Միութեանականներին, իրենց այդ խիստ գովելի ջանքերի համար, որով նրանք աշխատում են մի քիչ կարգ կանոն ձգել մեր խիստ քառասյին և խիստ շփոթ յեղափոխական իրերի գրութեան մէջ:

Մենք ոչ մի տարակոյս չունինք որ այդ փաստը անկեղծ ուրախութեամբ չի լեցնի բոլոր անկեղծ յեղափոխականների, առանց կուսակցական խտրութեան, սերտերը, ինչպէս նաև բոլոր հայ ժողովրդի, որի սիրտը միշտ թոյլ է եղած բարախելու Միութեան համար:

Միւս է սակայն մի խնդիր: Արդեօք ի՞նչպէս կընդունուին հրաւիրագրերը կուսակցութիւնների կողմից: Արդեօք սրանք կը պատասխանեն նրանց, և դրականապէս, թէ կտան բացասական պատասխան և կամ ամենևին էլ չեն արժանացնի նրանց ոչ մի պատասխանի:

Այս է հարցը, որը տալիս են իրենց՝ կատարուող իրողութեան մօտիկ հետեւողները: Եւ պատասխանում են այդ հարցին առհասարակ կամ խիստ սկզբնական կերպով և կամ ուղղակի բացասական կերպով: Գրեթէ առանց բացառութեան, ամենքը, այո, բոլոր Միութեան բարեկամները յոռետես են. ոչ ոք չէ հաւատում, ոչ ոք չէ ուզում մի րոպէ մտածել և ընդունել որ այդպիսի կամ այդքան մեծ բազդաւորութիւն կարող է ակնկալուել հայկական հիւանդոտ և հիւժուած ու մաշուած կեանքի մէջ:

Ընդհանուր հոգեբանութեան այս վիճակը որքան տխուր, նոյնքան և պէտք է խոստովանել բնական է և հասկանալի: Իսկապէս, մի՞թէ կարելի է, մի՞թէ կարելի է: Պահանջիք այդքան մեծ բազդաւորութիւն մի՞թէ շատ չէր լինի, մի՞թէ տարապայման չէր լինի:

Ինչ վերաբերում է մեզ, մենք, չուզելով հանդերձ միջ խաբել իրերի իսկական կացութեան վե-

րաբերմամբ, չենք ուզում սակայն բաժանել այդ ընդհանուր հոգեբանութիւնը: Մենք չենք ուզում ո՛չ յոռետես լինել և ո՛չ էլ լաւատես: Մենք սպասում ենք միայն իրողութիւններին: Այո՛ խնդիրը այնպիսի վիճակի մէջ է որ միանգամայն յանդգնութիւն է որևէ գուշակութիւն թող տալ որևէ պրոֆեստիկ անել:

Եւ սակայն, մենք յուսահատ չենք կարող յայտարարել մեզ, եթէ լաւատես էլ չենք:

Մենք գիտենք, և այդ անհերքելի է, անվիճելի է, որ այն ինչ ուզում է, ինչպահանջում է մեր հայ յեղ. կուսակցութիւններից, միանգամայն անհրաժեշտ է, միանգամայն օգտակար է, միանգամայն արդար է: Այս մասին չէ կարող լինել ո՛րևէ տարակոյս: Այս մասին տարակուսել կամ չը կամենալ՝ ուրիշ բան չէ կարող նշանակել: Բայց եթէ լինել կամ ուղղակի տգէտ, թանձրամիտ, իմաստակ, անմիտ և կամ ուղղակի դիւալին, չար, կեղծ, խաբեբայ, և կամ, թէ՛ մէկը և թէ՛ միւսը, բոլորը միասին:

Եւ որովհետեւ պահանջը անհրաժեշտ է, օգտակար է, ուստի և իրաւունք ունինք սպասելու, յուսալու որ նա կկատարուի: Եթէ չկատարուեցաւ այս անգամ, ապա նորից և նորից պէտք է աշխատինք որ կատարուի:

Մենք գիտենք, անձնական փորձով և գիտողութեամբ, որ բոլոր կուսակցութիւններն էլ իրենց մէջ պարունակում են կարեւոր թուով անհատներ, որոնք ամեն րոպէ պատրաստ են եղած և են դեռ այժմս գրկաբաց ընդունելու ամեն միջոց, որ կարող էր տանել դէպ ի ընդհանուր Միութիւնը: Այդպիսի անհատներ չեն կարող առանց փրկարար աղիւցքութեան մնալ իրենց պատկանած կուսակցութեանց վերայ:

Մենք, վերջապէս, ամենևին չենք կարող բացարձակ անվստահութեան մատնել Յեղ. կուսակցութիւններին վերաբերմամբ իրենց գնալիք առաջարկին:

Ի՞նչպէս, մի՞թէ նրանք այնպէս թեթեւ, այնպէս անփոյթ կա-

րող են վերաբերուել գէպի մի գաղափար, որին սկզբունքով առանց բացառութեան ամենքն էլ յարած են եղել, եթէ չեն կարողացել նրան գործնականի մէջ դնել վերջնականապէս:

Եւ ի՞նչ անհասկանալի անտարբերութիւն, ի՞նչ անմիտ յանձնապատանութիւն պիտի լինէր ներանցը, որ ոտնահար լինէին մի անհրաժեշտութեան, որը մենք համոզուած ենք որ նրանք չառլաւ ըմբռնած են, բայց որը կուզենային որ կատարուէր ամեն մէկը միայն իրա առանձին կուսակցութեան ցանկութեան հաճման, այսինքն Միութիւնը՝ իրա կուսակցութեան շուրջը միայն:

Ոչ մենք բացարձակապէս մերժում ենք մեզ այդպիսի սկեպտիկականութիւն:

Մենք յոյս ունինք: Մենք ըստպատում ենք: Մենք իրաւունք կտանք մեզ բացարձակ խօսելու երբ մեզանից առաջ իրողութիւնները իրենք խօսին:

Մենք, այո, մի րոպէ չենք կարող կարծել որ Հայ ժողովրդի ստրկութեան շղթաները վերջնականապէս խորտակուեն նուիրուած և նրա քրտինքով ու արիւնով սնուած ու շաղախուած զաւակները մերժեն գալ միմեանց մօտ հաւաքուիլ գլուխ գլխի տալ, մէկ սեղանի շուրջը, մտածելու, տեսնելու համար թէ ինչ կարելի է անել, ինչ դարձան կարելի է բերել իրերի անմիջական գործութեան:

Ոչ նրանք այդ չեն կարող անել: Նրանք այդ անելու իրաւունքը չունին ոչ մի կերպով: Նրանք, որ միշտ Միութեան անունից են խօսել, նրանք, որ մեզանից ցելով, կրօնով, լեզուով, հայրենիքով, ամեն ինչով օտար, տարբեր տարբերի հետ դաշնակցութեան են մտել, նրանք, որոնք Երիտասարդ Թիւրքերի հետ, այսինքն մեր Հայրենիքի ազատութեան գաղափարի ամենաանհաշտ, ամենաոխրերի միջնամիտների հետ կօնգրէս են կազմել — այս փաստ է — և պայմանաւորութիւնների (կոմպրօմիս) ու ժողովականների (կոնսիլիատու) մտել, նրանք, ասում ենք, չեն կարող, նոյն իսկ եթէ ուզեն, մերժել գումարելու առաջարկուած կօնգրէսը: Այդ կլինէր միանգամայն անհեթեթ: Այդ կլինէր միանգամայն անհասկանալի և աննեղելի:

Կրկնում ենք, մենք կսպասենք իրողութիւններին, բայց մենք անյոյս չենք: Մենք կկարծենք որ կուսակցութիւնները կըմբռնեն քայլի ծանրութիւնը և կլինին համեմատ նրան:

Հմայեակ Խոշարտեան



ՔԱՂԱՔԱԿԱՆ

Քաղաքական միջնորդութիւն երբեք քրիթթական կէտը Արեւմտեան Եւրոպայի է իւր շահերու և զգացումների ու նոր հոսանքներով: Ամեն բան զեռ ջինջ և յստակ լոյսի մը մէջ կերելի, բայց նրա չափին սլաքը փոփոխականի վրայ կը տատանի: Ընթերցողը լաւ կը իշէ որ թէ ծայրագոյն արեւելքի պատերազմին պայթումէն աստի՛ Պրանսայի մէջ՝ մասնաւոր ընկերակցական շարքերէն՝ հեղինակաւոր ձայնիւ բարձրացած են Ռուսո-Պրանսական դաշնակցութեան գէժ: Այդ միութեան խզուելուն ի նպաստ հետեւեալ փաստերը կը բերուին. Նախ գաղափարութեան յօդաւորները ժողովրդէն դաղանի պահուած են և ազատ Պրանսան պարտաւոր չէ իւր չճանցած պայմանները գործադրելու: Երկրորդ՝ դրդապատճառը որ Պրանսան Ռուսիոյ գերկը մղեց՝ գլխաւորապէս իւր մեկուսացած դիրքէն էր: Երրեակ ներգաղթութեան մը մղձաւանջը կը յաճախէր և կը տանջէր գայն և հանգիստ քուն մը քաշելու համար կարծես խնդ խնօք բան մը ընելու էր: Պրանսո-Ռուսո դաշնակցութենէն աստի հոլովող տասը տարիները լիապէս ցոյց տուին թէ այս միութեան մէջ Ֆրանսայի վրէժխնդրական յոյսերը և փափաքները խրախուսող ոչինչ կար: Ընդհակառակը: Պրանսան արդէն 1891 ի կացութեան հետ բաւական հաշտուած էր և պատերազմական աղէտներու կրկնութիւնը իրեն սարսափ կ'ազդէր: միայն կուղեր իւր սխալը առանձնութեանէն դուրս գալ: Ինչ որ իբր մեծ տէրութիւն՝ իւր շահերուն և փրէսթիժին համար անհրաժեշտ կը նկատուէր, Գերմանական նոր արշաւանքի մը վախի ալ չկրնար իբրեւ կարեւոր ազդակ մը նկատուիլ Պրանսո Ռուսական միութեան մէջ: Այսօր բացայայտ իրողութիւն մըն է թէ Գերմանիա մինչեւ ակունջը գաղթային և անտեսադիտական հարցերու մէջ թաղուած յարձակողական տրամադրութեան մը մէջ չըսնուիլի եթէ Պրանսա ինքը վրէժխնդրական տենդէ մը չըռնուի: Նոյն ատեն իրերու ընթացքը այնպէս ցոյց սուսաւ թէ Ռուսիա ոչ Պրանսայի հետ լրջօրէն կը ձայնակցէր Եգիպտոսի Անգլիացիներէն պարզուելու պահանջներ և ոչ ոք Պրանսայի գաղթային կամ արեւելեան շահերուն ի նպաստ ու եւէ արժէքաւոր ծառայութիւն կը մատուցանէր: Ինչ յայտնի չէ թէ Միտլհէյնի մաքսաւորներն գրաւումին ժամանակ Պրանսա Ռուսիոյ բարոյական աջակցութեան պէտք ունէր թէ ոչ: Հաւանօրէն ոչ՝ որովհետեւ Միտլհէյնի նահանգներն ալ հիմա յաճախակի ցոյցեր կընեն թրքական ջուրերուն վրայ առանց միւս տէրութեանց հաճութիւնը առնելու:

Ռուսիա Պրանսայի հանգէպ իւր բարեկամութիւնը կարտայայտէր միմիայն Պէւլիւնի մէջ Գերման և Պրանսական կառավարութիւններուն մէջ խաղաղութիւն միջնորդութիւն մը ընելով որով երկու տէրութիւններուն լարուած յարաբերութիւնները պիտի բարեւոքուէին հետզհետէ:

Բայց այսօր բանիմաց Պրանսացիներ թիրեւս իրաւամբ կը հարցնեն ինչո՞ւ չիաակ ճամբէն չեղել և Բեռլինի վրայով Պէուլին: Երթալ: Յիմարութիւն չէ՞՞ այսպիսի երեւութական ծա-

ռայութեան մը համար երկիւրոնները թափել Ռուսիոյ ծակ գրպաններուն մէջ, թող թէ Ֆրանսան շատ անգամ իւր շահերէն և պատգէն կը տուէր Ռուսիոյ արդար կամ անարդար ծրագրերուն նպատակելու համար և երբեմն ալ ինչպէս այսօր — պատերազմի մէջ ըլլալու վտանգին կ'ենթարկուէ:

Այնպէս կը թուի թէ Պրանսայի արդի արտաքին գործոց նախարարը Տէլքսանէնի Ռուսամոլ մը ըլլալէ՝ Պրանսայի իսկական շահը ուրիշ կապակցութիւններու մէջ կը տեսնէ: Ժամանակին ամենէն նշանակալից շարժումներէն մէկը Պրանսո-Անգլիական մերձեցումն է որ անցեալ ամառ սկսաւ և որ դէպի ճշմարիտ համերաշխութիւն մը մեծաքայլ կը յառաջանայ: Նախ իրաւարարութեան իրենց մէջ ծագելիք ոչ-հական դժուարութիւնները կարգադրելու սկզբունքը ինչ ընտելացաւ երկու դրացի պետութիւններու կողմէն: Այսօր-հզակուն իրողութիւն մը-մինչ իրենց ներգաղթիցները իրարու հետ սաստիկ կուրի բռնուած են՝ իրենք հոս համաձայնութիւն մը կը գոյացնեն որով Եգիպտոսի և Մարօքի հայելները փոխադարձ զինդոլութիւններով կը մաքրեն և նոր փորձ մը կ'ընեն Մայրաքոյն Արեւելքի պատերազմը իւր նոր սահմաններուն մէջ պահելու: Եւ կարծես անդիմադրելի ձգողութեամբ մը իտալիան ալ որ միշտ ոգով Պրանսայի և սրտով Անգլիոյ կապուած է, կուգայ իւր բնական տեղը բռնել այս նորարդութիւնը բարեկամութեան մէջ: Լոնտոնի Փարլիքի և Հոլովի միջեւ փոխանակուող անուշութիւնները բնական է չին կընար ոչ Բեռլինի պարզութիւնը: մէջ իրաւագրական քիմիքներ չունի: Թէպէտ Ձարը միշտ կը փութայ իւր ցրտին մայրաքաղաքէն շերտ խնդակցութիւն դրկել այս գէպերուն մասին սակայն Ռուսները լաւ գիտեն որ Պրանսայի մէջ ոռոտաւորութիւնը եռացման կէտէն շատ վար իջած է և փոփոխութիւն մը անխուսափելի կը դառնայ օրէ օր հակառակ Պրանսական լրագիրներուն բարեկամական անաղաղօք հաւաստիքներուն: Նմանօրինակ մտահոգութիւններ Պէուլինի մէջ ալ ներկայ են իտալիոյ նկատմամբ: Իտալիոյ և Աւստրիոյ մէջ անախտ չփոփոխուող անպակաս են մասնաւորապէս Պալատի և Աւստրիական իտալիոյ մէջ: Իտալացիները կը խորհին թէ իրենց աւստրապատակ եղբայրները կանխաւորին կառավարութեան կողմէ և Աւստրիա իւր դէպի Սալոնիկ տարածուելու մը-դումին մէջ՝ իտալիոյ Ալպանական դիտումներուն ոտի մէջ: Աւելին կայ իտալացիները Թրիէսթի և անոր շրջակայի իտալական վայրերուն մայր երկրին կցորդումը կ'երազեն իրականացնել, ինչ որ Աւստրիան իւր միակ կարեւոր նաւահանգիստէն զրկելով իբրեւ ծովային դուռութիւն մը սպաննելու հոմանիշ է: Այսպէս մինչ իտալիա իւր ներգաղթիցներէն կուծանայ և դէպ արեւմուտ կը հակին և այսպէս Գերմանիա իւր չափազանցուած շահասիրութեամբ և փառամոլութեամբ կը կղզիանայ՝ Երեւակ ներգաղթութիւնը իւր երկաթեղեկներով շափը լրացուցած կերելի: զեռ քանի տարի կրնայ տեսնել չինք գիտել: Իւր ներքին տկարութեան ակամայնիքներէն մէկը կընանք նկատել անտարբերութեան վրայ իւր վերջի վերջոյ զննողութեան մը ընդունուեցաւ թէ դաշնակից ժողովուրդներէն և թէ ամբողջ Եւրոպայէն: Նախագահ Լուպիլին Հոլով գալէն առաջ վերջէն Բ. ի և իտալիոյ թագաւորին տեսակցութիւնը ու բաժանաճառներուն մէջ ներգաղթու-

թեան ու բացակայ ընկերով վրայ դարձուած հնչուն չեղտին ալ կապացուցանեն թէ միութեան կապերը կը թուլան:

Մենք անկարող ենք վստահապէս գուշակելու թէ ապագան դիւանագիտական համաքաղաքութիւններուն մէջ ինչ փոփոխութիւններ պիտի մտնէ, բայց նկատելի շարժումները կը թուին խոստանալ երբեակ միութեան մը Անգլիոյ Պրանսայի և իտալիոյ միջեւ որուն զէմ պիտի շլանան Գերման և Ռուսական ներգաղթիւնը:

Եւ այն ատեն այդ երկու խուճեւորուն մէջ պիտի վերսկսի աշխարհի իսողոր որ պիտի տեսնէ: Աստուած գիտէ որչափ լիցէ աշխարհի բան մը իրականանար, մենք պիտի համակրէնք երբեակ միութեան հետ, որովհետեւ անտարակոյտ քաղաքակրթութեան և մարդասիրութեան տեսակետով՝ այն զեռ լաւագոյն խուճը պիտի ըլլար:

ՕՐԻ ՕՆ

ՀԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԺՈՂՈՎ

Մարտ 29ին Լոնտոնի մէջ Պալատեան Մամախուսմին նախաձեռնութեամբ և Ռոյալ Եմբլի եպիսկոպոսին նախագահութեամբ հրապարակաժողով մը տեղի ունեցաւ մօտադոյն Արեւելքի այժմեան կացութեան վրայ:

Անոր կը մասնակցէին Անգլիացի աւանաւոր անձնաւորութիւններ ամեն կուսակցութիւններէ, և Պուլկար, Պրանսացի ու իտալացի մարդասէրներ: Թէ և Պալատեան Մամախուսմը կազմուած է աւելի մակեդոնական հարցով զբաղելու նպատակաւ, բայց Ֆրանսացի պատգամաւորներու յատուկ ինդիւլտօք և համաձայնութեամբ անգլիացի Նիւ-հաւոր մարդասէրներու, ի մասնաւորի Տ. Ճէյմս Պրասի, հայկական հարցն ալ յիշատակուեցաւ ժողովին և անոր որոշումներուն մէջ:

Տիար Պրանսիս Բրէստիս Բայրզէն երկար հեռագիր մը զրկելով ի վեր կը հանէր հայկական եւ մակեդոնական հարցերու կապակցութիւնը և մօտագոյն Արեւելքի մէջ արեւմտեան ազգերու համընդհանր դրժողութեան մը առաւելութիւնները:

Ժողովին հաւանութեանը ենթարկուած առաջին որոշումը հետեւեալն էր: Ժողովը, բաղկացած Անգլիացի, Պրանսացի և իտալացի ամեն կուսակցութեանց պատգամաւորներէ, կը յայտարարէ որ թրքական յոյս վարչութեան շարունակութիւնը Մակեդոնիայի և Հայաստանի մէջ, նախատիք մ'է քաղաքակրթիալ Եւրոպայի համար և կը պահանջէ նշաւակիլ թուրքերուն կողմանէ այդ նահանգներուն մէջ գործուած արհաւիրքը և խռովութիւնները:

Երկրորդ որոշումը այսպէս խմբագրուած էր:

Ժողովն նկատելով Ռուսիոյ և Աւստրո-Հունգարիոյ անյաջողութիւնը Մակեդոնիայի ընակչաց յիմակին մէջ բարեփոխումը յատուկ բերելու կամնոր ապստամբութեան մը վտանգին առաջին ատենու համար, կը յայտարարէ որ մակեդոնական հարցին միակ գոհացուցիչ լուծումը կը կայանայ Սոցիալական անկախ և միայն եւրոպական մեծ տէրութեանց հանդէպ պատասխանատու կառավարչի մը անուանումին մէջ:

Առաջին որոշումը առաջարկեց Տիար Բիլլ Բիլլար, որ յայտարարեց թէ ինք քիչ համոզուած էր Ռուսիայի և Աւստրիայի, ինչպէս նաեւ Թուրքիայի, բարեկամութեան վրայ: Ընդհակառակն, Հայաստանի մէջ կացութիւնը

աւելի ծանր էր քան երբէք. նոյն կոտորածները սկսան նոյն պետերով եւ պէտք է վարձանալ եթէ Հայերը այդ տեսակ վարձարութեանց կը պատասխանեն ազդու գիտադրութեամբ մը, զոր արդէն 1901ին Ֆրանսական արտաքին գործոց նախարարը չէր համարձակել պատրաստելը:

Գիտեմ, յարեց նա, եւ քի վրայ պարտք դրին իմացունել ֆրանսական կառավարութեան որ պատասխանութիւնն վերահաս էր Հայաստանի եւ Մակեդոնիայի մէջ, եթէ բարենորոգումները չը մտցունեն օր առաջ, եւ առիթն կ'օգտուիմ այդ բանը իմացունելու համար նաեւ Անգլիական կառավարութեան: Ուրիշ կողմանէ նոր պատասխանութիւն մը պատեալով յառաջ պիտի բերէր Պուլկարիոյ եւ Թուրքիոյ միջեւ, եւ այդ պատեալով պիտի տարածուէր չուսով ամբողջ Եւրոպայի մէջ:

Տխար նշվինայն, որ նոր վերադարձած էր Մակեդոնիայէն, աղերարչ նրկարագրութիւն մ'ըբաւ այն խեղճութեանց, որոնց ակնատես եղած էր «Եթէ. ըսաւ, գիւղացիք գլուխ ծռէին այս ամենուն առանց սպասմանելու, մարդ չպիտի ըսէի անոնց»:

Տիկին Գարալիով ինքն ալ ջատագովեց որոշումը: Խիստ յուզուած կերպիւ նկարագրեց Մակեդոնացիաց կրած չարչարանները եւ թէ Պուլկարիոյ ինչ մեծ ծախք կը պատճառէին 30,000 փախստականները: Վերապ. Տր. Մեսորո ձիւզըն, ուսուցիչ կեօրկէվ եւ տիար Ակնօլթի առաջարկեցին երկրորդ որոշումը: Ապա տիար ճէյրը Պրայս, որ ծափահարուեցաւ ժողովէն, մակեդոնական հարցին իրական դժուարութիւնները ցոյց տալէն յետոյ, աւելցուց որ անոր միակ կարելի լուծումը, զէպի պիտութիւնները պատասխանատու եւ անկախ կառավարչի մը անուանումին մէջ կը կայանար: Ապա աւելցուց

«Անգղիայի մէջ, ժամանակէ մը ի վեր այլ եւս չեն զբաղիր հայկական հարցով: Բայց սակայն այն ալ համանման է մակեդոնականին: Երկու երկիրներու մէջ ալ նոյն արհաւիրքը կը տիրեն, եւ զայն (Հայկ. հարցը) լուծելու համար միեւնոյն իրաւունքներն ունինք հիմնուելով հանգիստութեան վրայ: Գոնէ գոհունակութիւն մըն է գիտնալ թէ արեւմտեան Եւրոպայի ազատ երեք մեծ երկիրները միացած են այս հարցի մասին, որ ազատութեան, արդարութեան եւ մարդկութեան հարց է (երկարատեւ ծափահարութիւններ):

Ապա հետզհետէ խօսեցան Վիկտոր Պերար, Լորտ Ապերտէն, Տր. Զօճին եւ Լորտ Լիթըն որոց ամենուն ալ ծափահարեց ժողովը:

Երեկոյին Պաշտօնակալ Մանախուտը ընդունելութիւն մը սարքած էր, ուր ներկայ էին Անգլիայի մէջ արմենո—մակեդոնական դատին համակիր ամենէն ակնաւոր անձնաւորութիւնները:

Ներկաներէն շատերը եւ ի մասնաւորի տիար ճէյրը Պրայս հաճոյքով իրենց «անձնական շնորհակալութիւնները» նուիրեցին Ֆրանսայի պապագամաւորներուն, որ Մակեդոնիայի եւ Հայաստանի հարցերուն միջեւ խտիր դրած չէին:

Տ. Վիկթոր Պերար կարճատեւ բանախօսութեամբ մը կրկին ըսաւ որ Ֆրանսացիներուն համար Պաշտօնը ծովէն կ'անցնէր եւ կ'երկարէր մինչեւ Ասիա:

Տխար ծ. Պրայս ինք ալ վերադառնալով այն պէտքերն վրայ թէ պէտք չէր երկու հարցերը դատել, յոյս

յայտնեց որ այնչափ ջանքեր ի դուր չպիտի ըլլային, եւ թէ Հայաստանն ու Մակեդոնիան պիտի տեսնէին իրենց երկար չարչարաններու վախճանը. շնորհիւ արեւմտեան երեք պետութեանց համաձայնութեան:

Բրո Արմէնիայէ քաղուած

ԱԶԳԱՅԻՆ

«Արմենիա» Լրագիրէն կարտատպենք.
—Էջմիածնէ կը գրեն թէ Արթ. Վ. Ամատունին կազմեր է մի հետաքրքիր բառարան: Երկար տարիներէ ի վեր հաւաքեր է հայերէն այն բոլոր բառեր, որոնք չեն մտած Հայկազեան եւ առձեռն բառարաններ ի մէջ. իր աղբիւրներ եղեր են ժողովրդական կենդանի լեզուն, գաւառաբարբառները, ձեռագիրները եւ լոյս տեսած հայերէն գիրքերը: Հաւաքած բառերը զուտ հայերէն բառեր են կամ հայացած բառեր եւ ոչ օտար: Բառարանին վերջը կցուած է եւ աշխարհաբար ոճերի բուսական հարուստ հաւաքածոյ մը: Բոլոր բառերն ունին եւ արդարացուցիչ վկայութիւններ, որոնք ցոյց կուտան թէ ո՛ր տեղէն քաղուած են եւ թէ ի՛նչ է իրենց իմաստը:

—Դովեկ գործ կը կատարեն Ամերիկաբնակ Հայք պատրաստուելով տօնելու հայաստէր գործունէութեան տասնամեակը օրիորդ Ալիս Սթօն Պէքուէլի, որու կոչը ի գիմաց «Հայաստանի բարեկամները» ընկերութեան հրատարակած ենք ժամանակին:

«Ձայն Հայրենեաց» կիսաշաբաթաթերթը հետեւեալ տեղեկութիւնները կուտայ Ազն. Օրիորդին գործունէութեանը վրայ:

—Օրիորդ Ա. Պէքուէլ չբաւականացաւ այդ հաւաքական գործունէութեամբ (Հայաստանի բարեկամները ընկերութեան—մէջ անձնուէր եւ գործն զեր մը ոտաձնելով) այլ անհատապէս, տասն տարիներէ ի վեր իր անձնական բազմազաղ գործերէն եւ իր ազգին ու կանանց դատին մատուցած ծառայութիւններէն երկար ժամեր խնայեց Հայ ազգին օգնելու համար:

—Հայը եւ Հայաստանը ծանօթացուց օտարաց, իր «կանանց լրագիր» Հայ Բանաստեղծութեանց հաւաքածոյն եւ ուրիշ նշանաւոր Հայ եւ հայապատու գրուածներու թարգմանութեանց հրատարակութեամբ:

—Ախոյեան կանգնեցաւ Հայի պատուին. — Ամերիկայի մէջ ուր որ հրատարակուած կ'երեւի Հայոց նկարագրին եւ դատին աննպաստ յօդուած մը, շատ ջանցները եւ ահա կը տեսնենք Օր. Ա. Պէքուէլի ազդու եւ կարուկ շատագովական պատասխանը:

—Օգնեց ու կ'օգնէ Հայ որբոց՝ սովորեցնելու կարօտելով թէ՛ իր առատ դրամական նուէրներով թէ՛ օտարներ հետաքրքրելով, եւ թէ՛ Հայոց հրապարակային բարեկարգութեան ժողովներու տնտեսական երթիկով եւ ամենուրեք եւ անձանձիր, տաքին եւ ցուրտին կարեւորութիւն շտալով:

—Չգնեց ու կ'օգնէ Հայ ազգի կրթութեան ընդհանրապէս եւ Հայ ուսանողաց մասնաւորապէս, զորք մը՝ որ իր

յատուկ եւ սիրելի հաճոյքը եղած է եւ է, բարոյական եւ նիւթական առատ ու ինքնանուէր աջակցութեամբ՝ իր համրաւը եւ ազդեցութիւնը գործածելով:

—Օգնեց եւ կ'օգնէ անգործ Հայերու մինչեւ իսկ՝ տրամադրելի ընկելով իր ազդեցութիւնը եւ թերթը «կանանց լրագիր» առանց վնասելու յուսախաբութիւններէ եւ տնտեսական անհաւանքներէ:

—Վերջապէս իր օրինակովն ու ազդեցութեամբ ողեւորեց նշանաւոր շատ մը Ամերիկացիներ՝ Հայոց մով զբաղելու, միշտ ցունցելու անոնց Հայի լուսագոյն նկարագրերը եւ միշտ արդարացիելով մեր ազգին մէջ պատահած տրեւիչ երեւոյթները—բերեւ պատահական եւ հակազդեցութիւն դարաւոր առաքանքի:

—Եւ ի լրումն ամենայնի՝ անցեալ տարի վերակազմեց «Հայաստանի Բարեկամաց» ընկերութիւնը աջակցութեամբ նշանաւոր Ամերիկացի արանց եւ տիկնանց:

Գործադիր Յանձնախումբը, որու նախագահն է ամերիկաբնակ հայոց առաջնորդ Յովսէփ Արք. Եպ. Սարաճեան, հետեւեալ որոշումները տրւած է հանդէսի մասին:

Ա. Օրիորդ Ա. Ս. Պէքուէլի իւղաներկ պատկերը նկարել տալով նրբերէլ Օրիորդին հրատարակային խնձորի եւ ժողովի մէջ:

Բ. ի պատիւ Օրիորդ Ա. Ս. Պէքուէլի՝ գոյացնել դրամագլուխ մը հայ ուսանողաց բարձրագոյն կրթութեան օգնելու համար:

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ ԲԱՌԱՐԱՆ ՊՈՒԿԱՐԵԼԵՆ-ՀԱՅԵՐԵՆ-ՏԱՃԿԵԼԵՆ

Կը բաղկանայ 592 երեսներէ, պարունակելով մօտ 30,000 բառեր եւ ոճեր: Ընտրի թուղթ, լայնուր տպագրութիւն, եւ շքեղ կազմ:

Այիգը, բացի Յառաջաբանէն, ունի քերականական կարեւոր Գիտելիքներու եւ կանոններու ամփոփումը (40 երեսի չափ): Մէկ խօսքով լատարան մը՝ որ իր պարունակութեամբ, եւ իր չափաւոր գնովը ամենէն յարմար օժանդակը կը հանդիսանայ պուլկարեւելեցուն սորիլի փափագող ամեն իրաւակարգի մարդոց, թէ՛ ուսանողին, թէ՛ վաճառականին եւ թէ պարզ արհեստաւորին:

ԳԻՆ Յ ԳՐԱՆՔ ԱՍՍՏՈՒՐ ԿՐԻՏԻՔԱՆ—ՓՈԾԻՆ

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ —(—)

«Բուս» լրագիրը կը պատմէ, որ Ձեռնապիւնքի մէջ զազախ մը թուր մը ներկայացուց զօրապետ Գուրգաթին ըսելով, «Ձեզ կուտամ այս թուրը ուրախան խաղախներու կողմէ որպէսզի անով ինքզինքնիդ թշնամուցն զէմ պաշտպանէք: Պատերազմին վերադարձնուդ զայն ինձ պիտի վերադարձունէք, բայց մաքուր քո չքերէք. կուզեմ զայն թշնամուցն արեւմտե թաթախուած տեսնել:»

Գուրգաթին սաստիկ յուզուած, զրկից եւ համբուրեց զազախը:

—Բեղերսպուրկէն կ'իմացունեն որ այն տեղի ակումբներուն (քիււպ) մէջ

վճակը են որոշեալ գումար մը յատկացնել գանձանակին ամեն մէկ խաղի համար, յօգուտ զինուորական ծախուց:

—Վլատիվոպոլի մօտ «Ասքօլտ» անուն կղզի մը կայ, ուր կ'անդրին հաղարաւոր այծեաններ եւ եղջերուներ: Ռուսք վճակեցին ամենն ալ սպաննել, զի մի գուցէ ձաքոնցիք զանոնք իրենց ուսեստին գործածեն:

Թիպիթեան արշաւախումբին ընկերացող թղթակից մը «Տէյլը Մէյլի»-ի մէջ կը թուէ այն դժուարութիւնները որոց կը պատահին Անգլիացիք իրենց յառաջիկադպրոցներէ մէջ: Զորապետ Մաքսուելտ ամսոյս 15 ին Ֆարի Եօնի հասաւ, ուրկէ անդին պէտք պիտի ըլլար անցնել 16.000 ոտք բարձր թանկաւ լեռնէն: Լեռան զագաթին 100 ոտք մնացած Անգլիացիք զաղար առին դիշերելու համար: Ամբողջ այդ լեռնադղձը ամայի տեսք մը ունի: Ոչ լոյս կը տեսնես, ոչ ալ միջամտեր այլ միայն թարշամած լեռնային խոտ, որով կը սնանին վայրենի էջեր եւ վիթեր: Անգլիական զօրաց համար վերջին աստիճան տաժանելի էր այդ լեռնային ճանապարհորդութիւնը: Շատ մը զինուորներ, եւ գործաւորներ զոհ գացին շնչային հիւանդութեանց: Բարձրերու անօր օդը եւ կիզիչ արեւակէն յառաջ եկած ցրտացումներ ու մանց վրայ մարելիք բերին: Այսու ամենայնիւ օդի ջերմաստիճանը վերջին աստիճան փոփոխական էր: Բարձրաբերձ լեռանց վրայ արեւակը այնչափ կիզիչ է, որ ցորեկը արեւահալութեան գէպերը կը պատահէին, իսկ գիշերը անհանդուրժելի ցուրտ կընէր:

—Ծալունի Բինկ—Օրին քաղքին մէջ զիւցազի մընուիրուած տաճար մը կայ: Փետրուար 5 ի առաւոյն, բարեպաշտ ոմանք որ հոն եկած էին աղօթել ճարտական զինուց յաղորդութեան համար, հետաքրքրաշարժ տեսարանի մը ակնատես եղան: Տաճարին մէջ ապրող 700 աղաներն 20-30 ական եւրամներու բաժնուեցան, ամեն մէկը երամ օտուցաւ տաճարին ջրամբարին ջուց խմեց: Եւ թոյալ զէպի հիւսիս երկու երամ իրենց տեղը մնացին, իւր թէ պահեստի համար:

Ասկէ ուսիկները այն հետեւեալութիւնը հանեցին, որ երկնային արշաւանք մը ուղղուած է հիւսիսային յիւրութեան մը վրայ, որպէս զի զայն պատմէ. կըսեն թէ այսպիսի բան մը պատահեցաւ նաեւ: Զինա ծաքոնական պատերազմին օկիզը:

—Աղակալից վիճաբանութիւնէ մը յետոյ, Տանիմարքայի ստորին խորհրդարանը ընդունեց 50ի զէմ 54 քուէով ծեծի պատիժը՝ անուղղայ յանցաւորներու համար: Կը կարծուի որ այս օրինագիծը ծերակոյտէն ալ պիտի ընդունուի:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Վիէննայի «Ալկեմիստ» Գրեքսթոնեցի «Լրագրոյն կ'իմացունեն Պուքրեչէն, թէ Ն. Թ. Բ. Իշխանը խնդրեր է Բուսանիոյ թագաւորէն, որպէս զի Բրէլէվէնի մէջ հաստատուելիք թանգարանին շնորհէ այն համազգեստը եւ զէնքը, զորս կը կրէր վերջին Բուսո—Թիւքական պատերազմի միջոցին:

—Վաճառականութեան եւ երկրազոյժութեան նախարարին տեղեկութիւն տրուած է Պելլիքաւո-

չեքէն՝ թէ հոն քանի մը օրէ ի վեր թոշօ Անտրէէվի տան տակէն սկսած է քարիւղ բղխել, որ բնաւ չտարբերիր Պաթուժի քարիւղէն: Նախարարութիւնը իր ճարտարագէտներէն մէկը նոյն վայրը զրկած է, որպէսզի քննէ աղբիւրին վիճակը և ցանկապատել տայ զայն պահպանելու համար:

Երկուշաբթի օրուան երկրտ շարժի մասին տեղեկութիւններ կը շարունակեն հասնել բայց բարեբաղդաբար մարդկային կեանքի կորուստ չկայ: Բիւրջի հռչակաւոր մենաստանին 50 ծխնեւոյնքը վար ինկան, ստորին յատիկ մէկ կամարը փլաւ, իսկ միւսները վնասուեցան: Եկեղեցւոյն պատերը ճաթոտեցան եւ շատ մը պատկերներ վար թափեցան:

Սօֆիայի մէջ իշխանական պալատին դէմի շէնքը, ուր տեղաւորուած էր իրաւագիտութեան ուսումնարանը սպստիկ վնասուեցաւ:

Թաթար-Բաղարճը բաղնիքը դռնուղները մերկ դուրս փախան, Գնչուհի մը տեմնելով որ ամեն մարդ խաչ կը հանէ, ինքն ալ այնպէս ընել սկսաւ:

Տուպիսիայի Պապելօօ աւանին ամբողջ տունները վնասուեցան: Մարգերուն մէջ երկու հազարամեթր երկայնութեամբ գետնէն պաղ ջուր ցայտել սկսաւ 2—5 մեթր բարձրութեամբ, իսկ ժափը դադարէն յետոյ գետինը ծածկուեցաւ սեւ աւաղով մը, որ վառօթի եւ ծծումբի հոտ կուտար: Զօնցի (Թրքի գաւառ) գիւղի շերմուկին ջուրը պղտորեցաւ եւ քիչցաւ, իսկ 60 մեթր հեռու նոր տաք ջուր ելաւ գետնէն:

Ճումապի միւնարեկները ինկան եւ երեք հոգի վիրաւորեցին: Երկրաշարժը զգացուեցաւ գրեթէ ամբողջ Պուլկարիոյ մէջ ինչպէս նաեւ Կ. Պոլսոյ Մէլանիկ, Պելլրատ եւ Պուտա-Բեշը:

ԹՈՒՐԳԻԱ

Կ. Պոլսոյ 21 մարտ — Բարենորոգումներուն հոգն ստանձնող պետութեանց գեղականները երէկ խնդրեցին Դռնէն, որպէսզի ոստիկանական նոր կանոնադիրը տպել տայ Ֆրանսերէն լեզուով նոյնպէս խնդրեցին որ ոստիկանական նոր համադրեցութիւն մէկ նմոյշը ցոյց տրուի իրենց:

Մանասկըքէն առնուած տեղեկութիւնը կը հաստատեն այն լուրը թէ Տիւրքիոյ Ալպանական շարժումին երկու պարագլուխները Պաթուշ և Շապան, անձնատուր եղան և հոս պիտի բերուին: Վիէննա 23 մարտ

Վիէննայի «Ֆրեմտընպլաթ» թերթին նայելով, Կ. Պոլսոյ աւստրո-հունգարական գեղականին պահանջումին վրայ, պա-

տերազմական գործերու նախարարը հրաւիրել է մակեդոնական ոստիկանութեան մէջ մտնել փափաքող սպանները որպէսզի իրեն ներկայանան: Նախարարը 5 հոգի պիտի ընտրէ, այսինքն հազարապետ մը, հարիւրապետ մը և երեք ենթասպաններ, որոնք Սկլանիկ պիտի ժամանեն մայիս 13 ին: Այս սպանները երկու տարուան համար մակեդոնական ոստիկանութեան մէջ պիտի մտնեն իբր կրթիչ, բայց ոստիկանութեան հրամանատարութիւնը թուրք սպաններուն ձեռքը պիտի մնայ:

«Ֆրեմտընպլաթ» պատուէր ստացած է հերքել այն զրոյցը թէ Սուլթանը դիտաւորութիւն ունի իր որդիներէն մէկը փոխարքայ նշանակել մակեդոնեան նահանգներուն:

ՐՈՒՍԻԱ

Ներքին գործոց նախարար Բելովէ համայն Ռուսիայի կառավարիչներուն չորսերեակն մը ուղղելով, հրաւէր կը կարգայ անոնց որպէս զի ուղղութեամբ վարուին հրէաներուն հետ, և մինչև պատերազմին վախճանը, հրէաները անիրաւ տեղ չտեղափոխուին իրենց բնակած գաւառներէն այլուր, մանաւանդ ընտանիք ունեցողները: Այս կարգադրութիւնը եղած են դադարեցուցու համար այն բողոքները որ շարունակ կը հասնին նախարարութեան:

ՊԱՏԵՐԱԶՄԸ

Լոնտոն 24 մարտ «Տէյլի Մէյլ»-ի իմանայ որ Զօնիկ Զուի վերջին կուրսին մէջ 30 ճաբոնցիներ սպաննուեցան: Քիսանի մօն ալ ճաբոնցի հազարապետ մը եւ 30 զինուորներ գերի բռնուեցան:

Բարիդ. 24 մարտ

Ալքսիոն լրագիրը լուր առեր է վարչապէնոր հոն խօսուածին նայելով, ապրիլ 15 ին (նոր տոմար) լեհացի յեղափոխականները մտադիր են սպաննել քաղքին մէջ գտնուող բոլոր ռուսները:

Բարիդ. 24 մարտ

Երեկոյեան թերթերը թերթապուրկէն հեռագիրներ կը հրատարակեն, որոց նայելով ճաբոնական նաւատորմը Բորթ-Արթուրի մօտ տեղնուել է ճաբոնցիք կը պատրաստուին զայն չըջապատել յուսահատ յարձակումով մը:

Բեդրսպուրկ. 24 մարտ

Բորէայի կայսրը Իթօ մարգի զի այցելութիւնը փոխարինելու համար յանձնարարել է ներքին գործերու նախկին նախարարին որպէսզի Միքայիլին այցելութեան մը տայ: Միատեղ բազմա-

թիւ հետեւորդներ պիտի ունենայ եւ շատ մը ընծաներ պիտի տանի ճաբոնի կայսր:

Բեթրսպուրկ. 24 մարտ

Պաշտօնական տեղեկութեանց համեմատ Եալէ գետին ամբողջ աջ եզրը բերնէն սկսեալ մինչև 75 մղոն տեղ տարածութեամբ ռուս զօրքերէն դրաւուած է:

Լոնտոն. ն.թ.

«Տէյլի Բրօնիք» կը հազորդէ որ ճաբոնցիք յաջողեցան Զօնուոն գրաւել, Եալու գետին ընթացքին մէջ տեղերը:

Բարիդ. ն.թ.

«Ֆիկարօ»-ի թղթակիցը շահագրգիռ տեսակցութիւն մ'ունեցաւ Թօլստօի կոմսին հետ, որ համակրութիւն յայտնեց դէպի ճաբոնցիները եւ ցաւ պատերազմին համար:

Լոնտոն. ն.թ.

Ճաբոնցիք Եալու գետին վրայէն Մանչուրիայի սահմանն անցան: Մեծ բաղնուներ կ'սպասուին Բարիդ. ն.թ.

Բորթ-Արթուրի մէջ կը պատրաստուին ուժանակով օդը հանել նուահանգստի անցքին մօտ ընկղմող ճաբոնական նաւերը:

Պերլին. ն.թ.

Բեդրսպուրկէն կը հազորդեն որ զօրապետ Բաշտիւնքի հեռագրած է թէ Թուրքիոյ շէնի մօտ կուր տեղի ունեցել է ռուս եւ ճաբոնցի զօրաց միջեւ վեց ճաբոնցիք սպաննուած են:

Լոնտոն. ն.թ.

Ռուսները սաստիկ ամբաջած են Նիու-Չուան քաղաքը, որու վրայ կեդրոնացուցած են ճաբոնցիք իրենց ուշադրութիւնը: Քաղաքին ամրոցներուն վրայ 100 թնթանութներ զետեղուած են: Անիկայ անառիկ կը սեպուի:

Լոնտոն. ն.թ.

Թօքիոյէն կը հազորդեն որ Միքայիլի նախագահութեամբ խորհուրդ մը որոշեց Թօկօ ծովակալին տեղ ուրիշ մը չըրկել, որովհետեւ չկրցաւ Բորթ-Արթուրը գրաւել:

«Տէյլի Մէյլ»-ի կ'իմացունեն Վէյ-Չայ-Վէյէն որ ճաբոնական «Եանիմարու» շոգենաւին ընկղմած ատեն 25 հոգի ծոշտկուել եղած են:

ՄԱԶԻՆԵՐԿ

ՎԵՆԻՍ

Յյս ներկը սքանչելի է իր տեսակին մէջ. երբէք չը բիծաւորը մօրթը եւ գործածութիւնը խիստ դիւրին է:

Հինգ ֆր. ի փոխարէն կարելի է ստանալ Տիւր Ա. Զարպանէլիանէ: Վառնա

ԹԱՏՐՈՆ

«ՆԱՏԵՍԱ» Հայ գերասական խումբը վաղը գիշեր «ՍԱԵՏԻՆԵՆԻ» սրահին մէջ պիտի ներկայացնէ:

ՄԱՔԻՊԱՆԵՆԻ

Բարոյալից Թաւրգոթիւն 1 յառաջարան, 3 արար

ԵՐԳ ԵՒ ՊԱՐ

Օրդ. Բերեկայի եւ Օլկայի կողմէ:

ՊԱՐ ՎԵՆԵՏԻԿԵՍՆ

Ամբողջ խումբին կողմանէ:

ՀՈՎԻԻ ԵՒ ՀՈՎԻՈՒԻ

Տրք. Պապեան, Յակոբեան և Օր. Վեհանուշի կողմանէ:

Խիստ ծիծաղաշարժ դաւելտ մը կատակերգակ հաճի Թակորի եւ խումբի կողմանէ:

Բշ. — Ոճրագործ մայրը. Թատր. 5 արար. Երգ. պար. դաւելտ

Գշ. — Կնոջ մը կեանքը. Թատր. 5 արար. Երգ. պար դաւելտ

ԹԻԻՃՃԱՐԻՑԷ

ՎԱՌՆԱ, 20 Մարտ

ԶԱՆԻՐԷ

ՊՈՒՂՏԱՅ	
Վալիս	54-59 լիպ. 6-—/11—
Արապա	52-60 լիպ. 8-—/11 20
ԱՐԲԱ	
Վալիս 100 քիւ	8.50/8.70
Արապա 42-45 լիպ.	4 60 5-20
ԵՆԻԼԱՅ արապա	33/36 լիպ. 4, —/4,40
Վալիս 100 քիւ	9.50/9-60
ՅԱՍՈՒԼԵԱ	100 քիւ 15/16—
Արապա 100 քիւ	14-16
ՏԱՐԸ արապա	57/59 5.80 6.00
ԳՕԼՕ2 արապա	9-80/10-10
ՄԻՍԻՐ Վալիս	7.5—7.10
ԶԱՎՏԱՐ արապա	6.60-7.20
« Վալիս	6.40/6.90
Կիւնտէ 30 —40 Վալիս	վէ 80-100
արապա կէլմէքտէ Վալիս	մուամէլէսի
նարուէն 20 ֆր.	արապա մուամէլէսի
նարուէն 20.80	

ՍԱՐԱՅԻՑԷ

Նարուէն 20, 65 ֆրանք	
Օամ. լիւրսը 22, 85 ալթուն ֆրանք	
ՊԱԳԱԼԻՑԷ	
Վարնա քիւնտէրտա պաղդալի	
մալլէրին պու կիւնքի ֆրանք, ալթուն ֆրանք իլէ:	
ԳԱԶԻԷ	1,80/2,21
ՇԵՔԷՐ Նէմէ	61
ՇԵՔԷՐ [քէմէ] սանտրք	31,80
ԲԻՐԻՆՇ Զիլլալէ չուլալը	39,—
» ճաբոն »	38,
» Իսկիլիք »	26.50
» Բիլլոն »	54 ֆր.
ԿԱԶ սանտրք	10.40
ԶԵԹԻՆ Եաղը քիւ	80—90
ԵՆԻՄՈՒՐԹԱ 100 սալտ	4,20—60
ԳՈՒՐՈՒ Իւլիւմ	26

ԱԶԴ

Պուլկարեւելի և Հայերէնի հմուտ երիտասարդ մը պաշտօն կը փնտռէ ու է վաճառատան մը մէջ. Դիմել իմ բաղրութեանս: